ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM
SHARE

Համարը	N 53	*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Քաղվածք	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	Չի հրապարակվել	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ կառավարություն	*Ընդունման ամսաթիվը*	21.12.2017
Ստորագրող մարմինը	ՀՀ վարչապետ	*Ստորագրման ամսաթիվը*	21.12.2017
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը		*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ «ՀՀ-ՈՒՄ ՀԱՑԱՀԱՏԻԿԱՅԻՆ ԵՎ ՀԱՏԻԿԱԸՆԴԵՂԵՆ ՈՐՈՇ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ ՍԵՐՄՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՈՒ ՍԵՐՄՆԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ի Ց

21 դեկտեմբերի 2017 թվականի N 53

9. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՑԱՀԱՏԻԿԱՅԻՆ ԵՎ ՀԱՏԻԿԱԸՆԴԵՂԵՆ ՈՐՈՇ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ ՍԵՐՄՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՈՒ ՍԵՐՄՆԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հավանություն տալ «Հայաստանի Հանրապետությունում հացահատիկային և հատիկաընդեղեն որոշ մշակաբույսերի տեղական սերմնաբուծության ու սերմնարտադրության զարգացում» ծրագրին՝ համաձայն հավելվածի:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Կ. Կարապետյան

2017 թ. դեկտեմբերի 21
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2017 թ.
դեկտեմբերի 21-ի նիստի N 53
արձանագրային որոշման

Հավելված
ՀՀ կառավարության 2017թ.
դեկտեմբերի 21-ի նիստի N 53
արձանագրային որոշման

ԾՐԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՑԱՀԱՏԻԿԱՅԻՆ ԵՎ ՀԱՏԻԿԱԸՆԴԵՂԵՆ ՈՐՈՇ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ ՍԵՐՄՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՈՒ ՍԵՐՄՆԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՆԱԽԱԲԱՆ

1. Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության և գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության բարձրացման գործում, սերմնաբուծության արդյունավետ համակարգի ստեղծումն ունի ռազմավարական նշանակություն:

2. Սերմնաբուծության խնդիրն է, հանրապետության տարբեր գյուղատնտեսական գոտիներում, կազմակերպել գյուղատնտեսական մշակաբույսերի առավել արդյունավետ սորտերի բուծման և որակյալ սերմերի բազմացման աշխատանքները:

3. Աշնանացան ցորենը կարևոր պարենային մշակաբույս է, որի հատիկն օգտագործվում է հացի, ձավարի, մակարոնեղենի և հրուշակեղենի արտադրության մեջ: Հատիկի վերամշակումից ստացվում է նաև սպիրտ, օսլա, սոսինձ, իսկ ալրաղացման մնացորդները, զտվածքը և ծղոտը օգտագործվում են որպես անասնակեր: Այն մշակում են Հայաստանի գյուղատնտեսական բոլոր գոտիներում, սակայն, պայմանավորված տվյալ գոտու բնակլիմայական պայմաններով, շրջանացված սորտերով ու կիրառվող ագրոտեխնիկական միջոցառումների հնարավորությամբ, այն ցուցաբերում է բերքատվության, հետևաբար նաև տնտեսական արդյունավետության տարբեր մակարդակ:

4. Հայաստանի հանրապետությունում տարածված է հիմնականում ցորենի աշնանացան կենսաձևը, որը, զբաղեցնում է շուրջ 80-105 հազ. հա տարածություն: Մշակության թույլտվություն ունեն 30 սորտեր, որոնցից լայն տարածում ունեն տեղական Մակար, Նաիրի 68, Արմսիմ, Սյունիք, ինչպես նաև Ռուսաստանի դաշնությունից վերջին տարիներին ներկրված Բատկո, Յուբիլեյնի 100, Կրասնոդար 99, Տանյա, Վասա սորտերը:

5. Հայաստանը ցորենի ապահովվածությամբ ինքնաբավ պետություն չէ, իսկ պահանջարկի ավելի քան 50%-ը ներկրվում է հիմնականում Ռուսաստանի դաշնությունից: Ցորենի համախառն արտադրանքը ըստ ՀՀ ԱՎԾ վերջին երեք տարիների տվյալների կազմել է ընդհանուր պահանջարկի մոտ 50%-ը: Ցորենի արտադրական ծավալները մեծացնելու համար նախատեսվում, բարձրորակ սերմնանյութի կիրառմամբ, բարձրացնել բերքատվությունը 20-25%-ով,

կատարելագործել արտադրական տեխնոլոգիաները, խթանել և զարգացնել սերմնաբուծությունը:

6. Հնդկացորենի մշակության տարածումը հանրապետությունում կլուծի մի շարք կարևոր խնդիրներ՝ այն է, կունենանք սննդարար բարձր հատկանիշներով օժտված դիետիկ ձավարեղեն, որի դեպքում կկրճատվեն այս սննդամթերքի ներկրումների ծավալները, կապահովվի մշակաբույսերի հերթափոխություն և կնպաստի դաշտավարության ոլորտում տնտեսավարողների՝ մասնավորապես գյուղացիական տնտեսությունների եկամուտների ավելացմանը: Հնդկացորենի մշակության արդյունավետության բարձրացմանը մեծապես նպաստում է տեղում հումքի վերամշակման կազմակերպումը, որի նպատակով, պետական և միջազգային ծրագրերի աջակցությամբ արդեն կառուցվել են հնդկացորենի ւ վերամշակող երկոգործարաններ՝ Բավրայում և Ծովագյուղում:

7. Հայաստանի հանրապետությունում հատիկաընդեղեն մշակաբույսերի շարքում առանձնակի տեղ են զբաղեցնում ոլոռը, ոսպն ու սիսեռը, որոնց նկատմամբ մեծ պահանջարկը պայմանավորված է հատիկների հարուստ կենսաքիմիական բաղադրությամբ: Դրանք պարունակում են բարձր քանակությամբ սպիտակուցներ, այդ թվում մարդու և կենդանու օրգանիզմի համար անհրաժեշտ գրեթե բոլոր անփոխարինելի ամինաթթուները, ճարպ, օսլա և վիտամիններ: Դա է վկայում նաև 2017 թվականի ընթացքում ցանքատարածությունների աճը, որը կազմել 2-3 անգամ ավել 2016 թվականի համեմատությամբ (Աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Ծրագրում ընդգրկված մշակաբույսերի ցանքատարածությունները, համախառն բերքը և սերմնանյութի պահանջվող միջին քանակները

h/h	Մշակաբույսը	Ցանքատարա-ծությունը (ԱՎԾ), հա		Միջին բերքատվությունը, g/հա	Համախառն բերքը, տոննա*	Պահանջվող սերմնանյութի քանակությունը, տոննա**
		2016թ	2017թ			
1	Աշնանացան ցորեն	107708	81456	20.0	189164.0	24436,8
2	Հնդկացորեն	519	433	12,3	585,5	43,3
3	Ոլոռ	132	241	31,0	578,1	60,2
4	Ոսպ	15	79	19,7	92,6	9,5
5	Սիսեռ	32	63	20,9	99,3	6,3

* հաշվարկները կատարվել են ըստ 2016 և 2017 թվականների միջին ցուցանիշների

** հաշվարկները կատարվել են ըստ 2017 թ. ցանքատարածության տվյալների

8.Վերլուծելով Հայաստանի հանրապետությունում առկա ցանքատարածությունների քանակը պետք է փաստել, որ ինչպես տեղական արտադրության, այնպես էլ արտերկրից ներկրված սերմնանյութի քանակությունները բավարար չեն բարձրորակ սերմնանյութով արտադրություն կազմակերպելու համար, որի պատճառով գյուղացիական տնտեսություններն հաճախ օգտագործում են սեփական արտադրության, ցանքային ցածրորակ հատկանիշներով օժտված սերմնանյութը, ինչը չի կարող ապահովել բարձր

բերքատվություն: Բացի այդ, հաճախ մշակության համար անհրաժեշտ պայմանների բացակայության և մշակության տեխնոլոգիական պայմանների ոչ լիարժեք կիրառելու արդյունքում ստացվում է ցածրորակ արտադրանք, որից սերմնանյութի առանձնացումը դառնում է ոչ նպատակահարմար և նոր սերմնանյութի ձեռք բերման խնդիրը դառնում է անհրաժեշտություն:

9. Բարձրակարգ սերմնանյութի արտադրական ծավալների ավելացման համար, անհրաժեշտ է ներդնել սերմնաբուծության աստիճանական համակարգ, որտեղ սերմնաբուծությամբ և սերմարտադրությամբ կզբաղվեն հանրապետության գիտական կենտրոնները, այնպես էլ տարբեր մարզերի մասնագիտացված ֆերմերային տնտեսությունները, որոնք ունենալով այդ ոլորտում գիտական ներուժ, հմուտ փորձառություն և համապատասխան արտադրական միջոցներ, լիովին համապատասխանում են ծրագրի կողմից առաջադրվող պահանջներին:

10. Այս և համանման այլ խնդիրների լուծմանն է ուղղված սերմնաբուծական տարբեր ծրագրերի իրականացումը, որը լուրջ խթան կհանդիսանա զարգացնելու տեղական սերմնաբուծությունն ու սերմնարտադրությունը:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

11. Ծրագրի նպատակն է հանրապետության տարածքում զարգացնել աշնանացան ցորենի, հնդկացորենի, ոլոռի, ոսպի և սիսեռի (այսուհետ՝ Մշակաբույսեր) սերմնաբուծությունն ու սերմարտադրությունը, որը հնարավորություն կընձեռի գիտական կենտրոնների, մասնավորապես Գյուղատնտեսության նախարարության համակարգում գործող «Գյումրիի սելեկցիոն կայան» ՓԲԸ-ի և «Երկրագործության գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի ու սերմ արտադրող ֆերմերային տնտեսությունների (այսուհետ՝ Սերմնաբուծական տնտեսություններ) միջոցով ավելացնել հանրապետության տարածքում արտադրված, բարձր որակ ապահովող սերմնանյութի արտադրական ծավալները:

12. Բուսաբուծական արտադրությանն ապահովել մշակաբույսերի սորտային ու ցանքային բարձրորակ և ագրոտնտեսական բարձր հատկություններով օժտված սերմնանյութով՝ երկրում ստեղծելով սերմարտադրության ընդհանուր շարունակական շղթա:

13. Հարստացնել մշակաբույսերի սորտային կազմը, որը լայն հնարավորություն կտա ոլորտի տնտեսավարողներին մշակաբույսերի ճիշտ գոտիավորման և սորտերի ընտրության հարցում

14. Տեղական արտադրության որակյալ սերմնանյութի արտադրության ծավալների ավելացման շնորհիվ բարձրացնել սերմնանյութով ինքնաբավության մակարդակը, ավելացնել մշակաբույսերի բերքատվությունը, ինչի հաշվին կավելանան նաև դաշտավարությամբ զբաղվող գյուղացիական տնտեսությունների եկամուտները:

ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

15. Նշված նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները՝

1) Սերմնաբուծության և սերմնարտադրության զարգացման խոչընդոտների գնահատումը և դրանց մեղմման հնարավորությունների օգտագործումը,
2) Մշակաբույսերի սորտային կազմի ու բարձրորակ սերմնանյութի պահանջարկի գնահատումը,
3) Սերմնաբուծական տնտեսությունների արտադրական կարողությունների հզորացումը և սերմնաբուծության գործընթացի շարունակական շղթան ապահովելու համար նախադրյալների ստեղծումը,
4) Ծրագրի մոնիթորինգի իրականացման մեխանիզմի առաջադրումը,
5) Ծրագրի ռիսկերի գնահատումը:

Հայաստանի Հանրապետությունում սերմնաբուծության և սերմնարտադրության զարգացման գործում հիմնականում խոչընդոտ են հանդիսանում սուպերէլիտային և էլիտային սերմերի անհրաժեշտ քանակների բացակայությունը, ինչպես նաև հողերի մասնատվածությունը, որը բերում է ցանքաշրջանառությունների կիրառման ցածր մակարդակի և դաշտերի բուսասանիտարական վիճակի վատթարացման: Սերմնաբուծության և սերմնարտադրության կայուն շարունակական ստեղծելու պարագայում վերոնշյալ խնդիրների ազդեցությունը զգալիորեն կմեղմվեն:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

16. Ծրագիրը նախատեսվում է իրականացնել է 2018 թվականի գարնանից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 10-ը ընկած ժամանակահատվածում:

17. Ծրագրի իրականացման առաջին տարում (2018թ) նախատեսվում է արտերկրից կամ տեղական սերմարտադրող կազմակերպություններից ձեռքբերել աշնանացան ցորենի 60 տոննա (Անտոնինա, Տրիո, Գռոմ, Կրասնոդար 99, Վասա, Մակար սորտերից յուրաքանչյուրը 10-ական տոննա քանակությամբ, ընդ որում Անտոնինա և Տրիո սորտերի սերմնանյութը ներկրվելու է արտերկրից), հնդկացորենի, ոլոռի, ոսպի և սիսեռի 5 - ական

տոննա էլիտային վերարտադրության բարձր բերքատու և հարմարվողականության ցուցանիշներ ունեցող սորտերի սերմնանյութ:

18. Սերմնանյութի ձեռքբերումն իրականացնելու է Հայաստանի Հանրապետության Գյուղատնտեսության նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն)՝ համաձայն «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

19. 1կգ սերմնանյութի ձեռքբերման համար ծրագրի շրջանակներում նախատեսվել են հետևյալ կողմորոշիչ գները՝ աշնանացան ցորեն –180 (տեղական) –300 (արտերկրից ներկրվող) - դրամ, հնդկացորեն – 1050 դրամ, ոլոռ-670 դրամ, ոսպ-1250 դրամ և սիսեռ-1200 դրամ՝ ներառյալ տեղափոխման հետ կապված ծախսերը:

20. Նախարարության կողմից ձեռքբերված սերմնանյութը գիտական կենտրոններին ու ընտրված (նախարարության «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ում գրանցված) ֆերմերային տնտեսություններին (Աղյուսակ 4), պայմանագրային հիմունքներով, տրամադրվելու է 1:2 փոխհարաբերությամբ սերմնանյութի կամ դրան համապատասխան դրամական արժեքի վերադարձման պայմանով:

21. Ֆերմերային տնտեսությունների և նախարարության միջև կնքվող պայմանագրում ամրագրվելու են դրույթներ ստացված սերմնանյութի հետագա բազմացման և ծրագրով նախատեսված սերմնանյութի քանակությունների ապահովման վերաբերյալ (Աղյուսակ 2):

22. Նախարարությունը, իրեն կառուցվածքում գործող «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի միջոցով, կազմակերպում է սերմնաբուծական տնտեսությունների կողմից ծրագրի շրջանակում արտադրված աշնանացան ցորենի սերմնանյութի քանակության մինչև 50%-ի, իսկ հնդկացորենի, ոլոռի, ոսպի ու սիսեռի սերմնանյութի քանակության մինչև 40%-ի գնումը՝ ինքնարժեքից շուրջ 30% հավելյալ արժեքով: Սերմնանյութի մնացած քանակությանը տնօրինում է սերմնաբուծական տնտեսությունը:

23. Պայմանագրի խախտման դեպքում՝ բացառությամբ բնական աղետների հետևանքով առաջացած անհաղթահարելի ուժի (ֆորս-մաժոր),

դադարեցվում է սերմնաբուծական տնտեսության մասնակցությունը ծրագրին և սերմնաբուծական տնտեսությունը կատարում է մինչև դադարեցման պահը ծրագրի շրջանակներում ստացած սերմնանյութի դրամական արժեքով վերադարձ՝ 1:2 փոխհարաբերությամբ:

Աղյուսակ 2

Սերմնաբուծական տնտեսություններին հատկացվող սերմնանյութի ծավալները, մաքուր սերմի ակնկալվող բերքը, 1կգ-ի ինքարժեքը և ԳՆ կողմից գնման համար նախատեսվող քանակությունը

հ/հ	Մշակաբույսը	Սերմնաբուծական տնտեսություններին հատկացվող սերմնանյութը			Դահանջվող ցանքատարածությունը, հա	Ակնկալվող բերքը, տոննա		1կգ սերմ-նանյութի ինքնարժեքը, դրամ	Գյուղատնտեսության նախարարության կողմից գնվող սերմնանյութը	
		Քանակը, տոննա էլիտա	1կգ-ի արժեքը, դրամ	Ընդհանուր արժեքը, հազ. դր.		Համախառն	Մաքուր սերմ***, 1-ին վերարտադրություն		Քանակը, տոննա	Դահանջվող գումարը, հազ դրամ
1	Աշնանացան ցորեն	40.0	180*	7200.0	214	963	722	98.9	361.0	46930.0
		20.0	300**	6000.0						
2	Հնդկացորեն	5.0	1050	5250.0	50	80	64	344.2	25.5	11985.0
3	Ոլոռ	5.0	670	3350.0	20	40	32	299.3	13.5	5265.0
4	Ոսպ	5.0	1250	6250.0	41	82	65	256.5	26.0	10016,6
5	Սիսեռ	5.0	1200	6000.0	50	90	72	305.8	28.0	9520.0
6	**Ընդամենը**	**80.0**	**-**	**34050.0**	**375**	**1255**	**955**	**-**	**442.4**	**83716,6**

*180դ տեղական սերմնանյութի արժեք, ** 300դ ներկրվող սերմնանյութի արժեք

***մաքուր սերմի ելքը ցորենի համար հաշվարկվել է 75%-ի հաշվով, իսկ մյուս մշակաբույսերի համար՝ 80%-ի հաշվով:

24. Ծրագրով նախատեսված սերմնանյութի քանակությունները տրամադրվելու է սերմնաբուծական տնտեսություններին տարբեր մասնաբաժիններով՝ հաշվի առնելով մշակաբույսերի գոտիականությունը, ինչպես նաև տնտեսության արտադրական պայմաններն ու հնարավորությունները:

25. Ծրագրով հատկացված սերմնանյութով սերմնաբուծական տնտեսությունները հիմնելու են սերմնադաշտեր, որոնց մշակությունը իրականացվելու է սերմնաբուծության և սերմարտադրության աշխատանքների իրականացման համար առաջադրվող պահանջներին համապատասխան:

26. Սերմնադաշտերի մշակության համար արտադրական ծախսումները կատարվելու են սերմնաբուծական տնտեսությունների կողմից՝ սեփական միջոցների հաշվին (Աղյուսակ 3; 4; 5; 6; 7; 8):

27. Սերմնադաշտերի ապրոբացիան կատարվելու է Հայաստանի Հանրապետության Գյուղատնտեսության նախարարության կողմից տրամադրված ապրոբատորի հավաստագիր ունեցող մասնագետների կողմից:

ԾՐԱԳՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

28. Ծրագրի մոնիթորինգն իրականացվելու է Հայաստանի Հանրապետության Գյուղատնտեսության նախարարության համապատասխան մասնագետների միջոցով՝ «Սերմերի գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպության մասնագետների ներգրավմամբ:

29. Ծրագրի շրջանակներում մոնիթորինգի տվյալների ամփոփման արդյունքում բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչությունը ձևավորելու է վիճակագրական տվյալների բազա, որը ներառելու է ծրագրի իրականացման ընթացքում առաջացած խոչընդոտները, սերմնաբուծության զարգացման ուժեղ ու թույլ կողմերը, ծրագրի իրականացման հետ կապված տեղեկատվությունը, արձանագրված խնդիրները և իրագործման դժվարությունները:

30. Գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի բուսաբուծության և բույսերի պաշտպանության, գյուղատնտեսական ծրագրերի մոնիթորինգի և վերլուծության վարչությունների մասնագետները ընտրանքային ուսումնասիրություն կարող են իրականացնել ծրագրի պայմաններին սերմնաբուծական տնտեսությունների գործառույթների համապատասխանությունն ստուգելու նպատակով:

31. Մոնիթորինգ իրականացնող մասնագետները առնվազն 3 ամիսը մեկ

անգամ հաշվետվություն կներկայացնեն Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն:

32.Հաշվետվությունը պետք է պարունակի մանրամասն տեղեկատվություն ծրագրի ընթացքի մասին, այդ թվում.

1) սերմնադաշտում իրականացվող աշխատանքների ու ընդհանուր վիճակի, մշակաբույսերի սորտային կազմի, հարմարվողականության մասին,

2) տեղեկատվություն մոնիթորինգի արդյունքների մասին,

3) տեղեկատվություն հայտնաբերված խախտումների մասին,

4) առաջարկություններ ծրագրի պայմանների բարելավման կամ կատարելագործման վերաբերյալ և այլն:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ

33. Ծրագրի իրականացման հնարավոր ռիսկեր են՝

1) անբարենպաստ կլիմայական պայմանների (ձմռան երկարատև սառնամանիքներ, գարնանային ցրտահարություն, կարկուտ, խորշակ, սելավ, փոթորիկ) հետևանքով սերմնադաշտերի մասնակի կամ ամբողջական վնասվածությունը,

2) ներկրվող սերմնանյութի համար նախատեսվածից բարձր գների առաջադրումը,

3) մատակարարման ժամկետների չնախատեսված խախտումները,

4) եղանակային անբարենպաստ պայմանների պատճառով դաշտային աշխատանքների կազմակերպման համար ժամկետների խախտումը:

Վերոնշյալ հնարավոր ռիսկերի մեղմման նպատակով նախատեսվում է բանակցություններ վարել արտերկրի և տեղական սերմարտադրող կազմակերպությունների հետ և սերմնանյութը ձեռք բերել այն կազմակերպությունից, որը կառաջարկի բարձր որակ ու համեմատաբար ցածր գին, ընդ որում գործընթացն անհրաժեշտ է կազմակերպել գարնանացանի աշխատանքները սկսվելուց առնվազն մեկ ամիս առաջ: Բնական աղետների հնարավոր ռիսկերը մեղմելու նպատակով, անհրաժեշտ է պահպանել մշակության տեխնոլոգիայով նախատեսված բոլոր ագրոմիջոցառումները

(ցրտահերկ, պարարտացում, ոռոգում և այլն), դրանք կատարել որակով և ժամանակին:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

34.Ծրագրի իրականացման ֆինանսավորման աղբյուրը պետական բյուջեն է և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցները:

35. Ընդհանուր հաշվով մինչև 375 հա սերմնադաշտեր հիմնելու և գիտականորեն հիմնավորված պահանջներին համապատասխան սերմնաբուծություն ու սերմնարտադրություն կազմակերպելու համար, ծրագրի կողմից սերմնաբուծական տնտեսություններին հատկացվող 80 տոննա սերմնանյութը կնպաստի սերմնաբուծական տնտեսությունների ֆինանսական կայունության բարելավմանը, որը թույլ կտա հետագա տարիներին զարգացնել տեղական արտադրության սերմնաբուծությունն ու սերմնարտադրությունը հանրապետության գյուղատնտեսական տարբեր գոտիներում:

36. Ծրագրով ձեռք բերված սերմնանյութով հիմնված սերմնադաշտերից նախատեսվում է ստանալ աշնանացան ցորենի - 722, հնդկացորենի -64, ոլոռի-32, ոսպի – 65 և սիսեռի-72.0 տոննա առաջին վերարտադրության սերմնանյութ, որը բավարար է ցանելու համապատասխանաբար աշնանացան ցորենի - 2578, հնդկացորենի -640, ոլոռի-128, ոսպի – 542 և սիսեռի-720 հա ցանքատարածություն:

37. Ծրագրի իրականացման համար անհաժեշտ է 117766.6 հազ. դրամ, որից սերմնանյութի ձեռքբերման համար հատկացվելու է 34050.0 դրամ, իսկ սերմնաբուծական տնտեսություններից սերմնանյութը գնելու համար՝ 83716.6 դրամ:

38. Ծրագրի շարունակականության, սերմնաբուծության ու սերմնարտադրության անընդհատ շղթան զարգացնելու նպատակով, անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության դեպքում, հաջորդ երկու (2019 և 2020թ.) տարիներին ծրագիրը կիրականացվի միևնույն մեխանիզմներով:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

39. Հայաստանի Հանրապետությունում սերմնաբուծական տնտեսությունների արտադրական կարողությունների հզորացում,
40. Հանրապետության տարածքում արտադրվող բարձր վերարտադրության աշնանացան ցորենի, հնդկացորենի, ոլոռի, ոսպի ու սիսեռի սերմնանյութի արտադրական ծավալների ավելացում և տեղական արտադրության սերմնանյութով ինքնաբավության մակարդակի բարձրացում,
41. Աշնանացան ցորենի, հնդկացորենի, ոլոռի, ոսպի ու սիսեռի սորտային կազմի հարստացում, մշակության արդյունավետության բարձրացում և գյուղացիական տնտեսությունների եկամուտների ավելացում,
42. Բարձր վերարտադրության սերմերի արտադրության ամբողջ գործընթացի նկատմամբ պետական վերահսկողության բարելավում:

Աղյուսակ 3

ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Ցուցանիշի անվանումը	Աշնանացան ցորենի, հնդկացորենի, ոլոռի, ոսպի ու սիսեռի տեղական արտադրության սերմնանյութի քանակների ավելացում 955 տոննայով:
Համառոտ նկարագրությունը	Ծրագրով նախատեսված աշնանացան ցորենի 60 տոննա, հնդկացորենի՝ 5, ոլոռի՝ 5, ոսպի՝ 5 ու սիսեռի՝ 5 տոննա ձեռքբերված էլիտային սերմնանյութով, 2018-2019 վեգետացիոն տարիներում, սերմնադաշտերի մշակությունից կստացվի աշնանացան ցորենի 722 տոննա (2019թվականին), հնդկացորենի՝ 64, ոլոռի՝ 32, ոսպի՝ 65 և սիսեռի՝ 72.0 տոննա 1-ին վերարտադրության սերմնանյութ (2018թվականին): Սերմնանյութի վերոնշյալ քանակություններից սերմնաբուծական տնտեսությունները Հայաստանի Հանրապետության Գյուղատնտեսության նախարարությանը կվերադարձնեն աշնանացան ցորենի՝ 120 տոննա, հնդկացորենի, ոլոռի, ոսպի ու սիսեռի 10-ական տոննա սերմնանյութ կամ դրանց դրամական արժեքին համապատասխան գումար: Հայաստանի Հանրապետության Գյուղատնտեսության նախարարությունը, ծրագրի համար ծախսված գումարների վերականգնման (առանց լրացուցիչ շահույթ ստանալու), ինչպես նաև արտադրված սերմնանյութի իրացման հարցում պետական աջակցություն ցուցաբերելու նպատակով, սերմնաբուծական տնտեսություններից կգնի աշնանացան ցորենի 361տոննա, հնդկացորենի 25.5, ոլոռի՝ 13.5, ոսպի՝ 26.0 և սիսեռի՝ 28.0 տոննա սերմնանյութ:
Նպատակը/ կարևորությունը	Հաշվի առնելով Հայաստանի հանրապետությունում առկա ցանքատարածությունների քանակը պետք է փաստել, որ ինչպես տեղական արտադրության, այնպես էլ արտերկրից ներկրված սերմնանյութի քանակությունները բավարար չեն բարձրորակ

	սերմնանյութով արտադրություն կազմակերպելու համար, որի պատճառով գյուղացիական տնտեսություններն հաճախ օգտագործում են սեփական արտադրության, ցանքային ցածրորակ հատկանիշներով օժտված սերմնանյութը, ինչը չի կարող ապահովել բարձր բերքատվություն: Բացի այդ, հաճախ մշակության համար անհրաժեշտ պայմանների բացակայության և մշակության տեխնոլոգիական պայմանների ոչ լիարժեք կիրառելու արդյունքում ստացվում է ցածրորակ արտադրանք, որից սերմնանյութի առանձնացումը դառնում է ոչ նպատակահարմար և նոր սերմնանյութի ձեռք բերման խնդիրը դառնում է անհրաժեշտություն:
Տեղեկատվության հավաքագրումը/ աղբյուրը	Տեղեկատվությունն ակնկալվում է ստանալ ինչպես մոնիթորինգ իրականացնողներից, ֆերմերային տնտեսություններից (համաձայն ստացված և իրացված սերմնանյութի քանակությունների), այնպես էլ նախարարության համապատասխան ստորաբաժանումների մասնագետների կողմից կատարվելիք հարցումների ու դիտարկումների արդյունքում: Տեղեկատվությունը հավաքագրվելու և վերլուծվելու է ծրագրի իրականացման համար պատասխանատու ստորաբաժանման կողմից:
Հաշվարկման մեթոդը	Աշնանացան ցորեն - 60տ (հատկացվող սերմնանյութ):280կգ/հա(ցանքի նորմա) = 214հա x 4.5 տոննա (բերքը 1 հա-ից) = 963 տոննա(համախառն բերք) - 25% (խառնուրդ) = 722 տոննա մաքուր սերմ: Հնդկացորեն – 5տ (հատկացվող սերմնանյութ):100կգ/հա(ցանքի նորմա) = 50հա x 1.6 տոննա (բերքը 1 հա-ից) = 80 տոննա(համախառն բերք) - 20% (խառնուրդ) = 64 տոննա մաքուր սերմ: Ոլոռ – 5տ (ներկրվող սերմնանյութ) : 250կգ/հա(ցանքի նորմա) = 20հա x 2.0 տոննա (բերքը 1 հա-ից) = 40.0 տոննա(համախառն բերք) - 20% (խառնուրդ) = 32 տոննա մաքուր սերմ: Ոսպ – 5տ (ներկրվող սերմնանյութ) : 120կգ/հա(ցանքի նորմա) = 41հա x 2.0 տոննա (բերքը 1 հա-ից) = 82.0 տոննա(համախառն բերք) - 20% (խառնուրդ) = 65 տոննա մաքուր սերմ: Սիսեռ–5տ (ներկրվող սերմնանյութ) : 100կգ/հա(ցանքի նորմա) = 50հա x 1.8տոննա (բերքը 1 հա-ից) = 90.0 տոննա(համախառն բերք) - 20% (խառնուրդ) = 72.0 տոննա մաքուր սերմ: Ստացված սերմնանյութի ընդհանուր քանակությունը կազմում է 955 տոննա (722+64+32+65+72), որը բավարար է 4608 հա (2578+640+128+542+720) սերմադաշտի համար՝ յուրաքանչյուր մշակաբույսի համար կիրառելով ցանքի նույն նորմաները:
Տեղեկատվության սահմանափակումները	Տրամադրվող սերմնանյութի, ապրոբացիաների, սերմադաշտերի բերքատվության գնահատման, ստացված փաստացի համախառն բերքի և մաքուր սերմնանյութի հաշվառումների ու գրանցումների արդյունքում տեղեկատվության սահմանափակումները գործնականում բացառում ենք:
Ցուցանիշի տեսակը	Ցուցանիշը չափում է Ծրագրի իրականացման ուղղակի արդյունքը՝ ստացվում է ընդհանուր հաշվով 955տոննա առաջին վերարտադրության և շուրջ 2-3 անգամ ցածր ինքարժեքով տեղական արտադրության սերմնանյութ:

Չափման միավորը	Տոննա
Ներկայացման եղանակը	Տարեկան կտրվածքով կատարողականները ներկայացվում են կուտակային եղանակով
Հաշվետվողականության ցիկլը	Տարեկան
Թույլատրելի շեղումը	Թիրախային մակարդակի համեմատ փաստացի ցուցանիշների 7-10 տոկոսային կետով շեղումը համարվում թույլատրելի
Պատասխանատվությունը	Ցուցանիշների ձեռք բերման և հաշվետվողականության համար պատասխանատու է ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը (համապատասխան ստորաբաժանումը)

Աղյուսակ 4

Ծրագրին մասնակցող սերմնաբուծական տնտեսությունները

Հ/h	**Անունը, ազգանունը**	**Մարզը**	**Համայնքը**
1	«Գյումրիի սելեկցիոն կայան» ՓԲԸ	Շիրակ	-
2	Երկրագործության գիտական կենտրոն	Արմավիր	-
3	Պետրոսյան Հունան		Մեղրաշեն
4	Ղազարյան Մամիկոն		Բենիամին
5	Այվազյան Ալբերտ		Առափի
6	Գևորգյան Գևորգ		Հացիկ
7	Գաբոյան Հովհաննես		Կառնուտ
8	Գևորգյան Հովհաննես		Ախուրյան
9	Սերգոյան Արա		Ախուրյան
10	Ուզունյան Վոլոդյա	**Տավուշ**	Արծվաբերդ
11	Իվանյան Սևադա		Իշխանասար
12	Թանգյան Արարատ	**Սյունիք**	Բռնակոթ
13	Խաչատրյան Գագիկ		Շաղաթ
14	Նալբանդյան Էդիկ	**Գեղարքունիք**	Ազատ
15	Զաքարյան Սամվել		Ք. Գավառ
16	Գյուլզադյան Վռամ	**Լոռի**	Վարդաբլուր
17	Ոսկանյան Խաչիկ		Մեծ Պառնի

Աղյուսակ 5

Աշնանացան ցորենի էլիտային սերմնանյութով կատարված ցանքերում կատարվող աշխատանքները և 1կգ առաջին վերարտադրության սերմնանյութի ինքնարժեքը (1 հա-ի հաշվով, ջրովի պայմաններում)

Աշխատանք	**Չափի միավորը**	**Միավորի արժեք, դրամ**	**Ընդհանուր քանակը**	**Ընդհանուր արժեքը, դրամ**
Սերմնանյութ	կգ	180	280	50400*
Ցանքակից պարարտացում՝ ֆոսֆորական	կգ	140	250	35000
Կալիումական	կգ	140	150	21000
Պարարտանյութերի և սերմի տեղափոխում	տոննա	10000	0.78	7800
Վար, հարթեցում և ակոսների պատրաստում	հա	54000	1	54000
Ցանք	հա	12000	1	12000
Պայքար մոլախոտերի դեմ (հերբիցիդ)	կգ	5000	1.5	7500
Պայքար մոլախոտերի դեմ	հա	10000	1	10000
Ոռոգում 3 անգամ	հա	9000	3	27000
Ջրվորի աշխատավարձ 3 անգամ	հա	10000	3	30000
Սնուցում ազոտական պարարտանյութով	կգ	120	300	36000
Ազոտական պարարտանյութի տեղափոխում	տոննա	10000	0.2	2000
Պարարտանյութի ցրում	հա	5000	1	5000
Սորտային քաղհան	հա	20000	1	20000
Բերքահավաք	հա	30000	1	30000
Բերքի տեղափոխում	կգ	2.2	4500	10000
Սերմերի զտում, ախտահանում, պիտակավո-րում, պարկավորում	տոննա	15000	3,375	50625
Հողի հարկ	հա	23000	1	23000
Չնախատեսված ծախսեր	-	-	-	15000
Ընդամենը ծախսեր	**-**	**-**	**-**	**446325**
Մաքուր սերմնանյութի ելք կգ	**կգ**	-	-	**3375**
Խառնուրդի ելքից ստացվող հասույթ	կգ	100	1125	112500
Սերմնանյութի ինքնարժեքը	**կգ**	-	-	**98,9**

*Արտերկրից ներկրված սերմնանյութի արժեքը կազմում է 84000, իսկ 1կգ-ի ինքարժեքը՝ 108.8 դրամ

Աղյուսակ 5.1

Աշնանացան ցորենի էլիտային սերմնանյութով կատարված ցանքերում կատարվող աշխատանքները և 1կգ առաջին վերարտադրության սերմնանյութի ինքնարժեքը (1 հա-ի հաշվով, անջրդի պայմաններում)

Աշխատանք	**Չափի միավորը**	**Միավորի արժեք, դրամ**	**Ընդհանուր քանակը**	**Ընդհանուր արժեքը, դրամ**
Սերմնանյութ	կգ	180	280	50400*
Ցանքակից պարարտացում՝ ֆոսֆորական	կգ	140	250	35000
Կալիումական	կգ	140	150	21000
Պարարտանյութերի և սերմի տեղափոխում	տոննա	10000	0.78	7800
Վար, հարթեցում (չիզել)	հա	42000	1	42000
Ցանք	հա	12000	1	12000
Պայքար մոլախոտերի դեմ (հերբիցիդ)	կգ	5000	1.5	7500
Պայքար մոլախոտերի դեմ	հա	10000	1	10000
Սնուցում ազոտական պարարտանյութով	կգ	120	250	30000
Ազոտական պարարտանյութի տեղափոխում	տոննա	10000	0.2	2000
Պարարտանյութի ցրում	հա	5000	1	5000
Սորտային քաղհան	հա	15000	1	15000
Բերքահավաք	հա	27000	1	27000
Բերքի տեղափոխում	կգ	2.3	3000	7500
Սերմերի զտում, ախտահանում, պիտակավո-րում, պարկավորում	տոննա	13000	2.250	30000
Հողի հարկ	հա	15000	1	15000
Չնախատեսված ծախսեր	-	-	-	10000
Ընդամենը ծախսեր	**-**	**-**	**-**	**327200**
Մաքուր սերմնանյութի ելք կգ	**կգ**	**-**	**-**	**2250**
Խառնուրդի ելքից ստացվող հասույթ	կգ	100	750	75000
Սերմնանյութի ինքնարժեքը	**կգ**	**-**	**-**	**112.0**

*Արտերկրից ներկրված սերմնանյութի արժեքը կազմում է 84000, իսկ 1կգ-ի ինքարժեքը՝ 127.0 դրամ

Աղյուսակ 6

Հնդկացորենի էլիտային սերմնանյութով կատարված ցանքերում կատարվող աշխատանքները և 1կգ առաջին վերարտադրության սերմնանյութի ինքնարժեքը (1 հա-ի հաշվով)

Աշխատանք	**Չափի միավորը**	**Միավորի արժեք, դրամ**	**Ընդհանուր քանակը**	**Ընդհանուր արժեքը, դրամ**
Սերմնանյութ	կգ	1050	100	105000
Ցանքակից պարարտացում՝ ֆոսֆորական	կգ	140	250	35000
Կալիումական	կգ	140	150	21000
Պարարտանյութերի և սերմի տեղափոխում	տոննա	10000	0.5	5000
Վար, հարթեցում և ակոսների պատրաստում	հա	54000	1	54000
Ցանք	հա	12000	1	12000
Պայքար մոլախոտերի դեմ (հերբիցիդ)	կգ	5000	1.5	7500
Պայքար մոլախոտերի դեմ՝ ծլումից 5-6 օր առաջ	հա	10000	1	10000
Ոռոգում 3 անգամ	հա	9000	3	27000
Ջրվորի աշխատավարձ 3 անգամ	հա	10000	3	30000
Սնուցում ազոտական պարարտանյութով	կգ	120	200	24000
Ազոտական պարարտանյութի տեղափոխում	տոննա	10000	0,15	1500
Պարարտանյութի ցրում	հա	5000	1	5000
Սորտային քաղհան	հա	40000	1	20000
Բերքահավաք	հա	30000	1	30000
Բերքի տեղափոխում	կգ	6.2	1600	10000
Սերմերի զտում, ախտահանում, պիտա-կավորում, պարկավորում	տոննա	30000	1,280	33600
Հողի հարկ	հա	23000	1	23000
Չնախատեսված ծախսեր	-	-	-	15000
Ընդամենը ծախսեր	-	-	-	**468600**
Մաքուր սերմնանյութի ելք կգ	կգ	-	-	**1280**
Խառնուրդի ելքից ստացվող հասույթ	կգ	100	280	28000
Սերմնանյութի ինքնարժեքը	կգ	-	-	**344.2**

Աղյուսակ 7

Ոլոռի էլիտային սերմնանյութով կատարված ցանքերում կատարվող աշխատանքները և 1կգ առաջին վերարտադրության սերմնանյութի ինքնարժեքը (1 հա-ի հաշվով)

Աշխատանք	**Չափի միավորը**	**Միավորի արժեքը, դրամ**	**Ընդհանուր քանակը**	**Ընդհանուր արժեքը, դրամ**
Սերմնանյութ	կգ	670	250	167500
Հիմնական պարարտացում՝ ֆոսֆորական	կգ	140	250	35000
կալիումական	կգ	140	150	21000
Պարարտանյութերի և սերմի տեղափոխում	տոննա	10000	0,65	6500
Վար, հողի նախացանքային մշակում, մարգերի պատրաստում	հա	54000	1	54000
Ցանք	հա	12000	1	12000
Պայքար մոլախոտերի դեմ (հերբիցիդ)	կգ	5000	1.5	7500
Պայքար մոլախոտերի դեմ՝ ծլումից 5-6 օր առաջ	հա	10000	1	10000
Ոռոգում 3 անգամ	հա	11000	3	33000
Ջրվորի աշխատավարձ 3 անգամ	հա	10000	3	30000
Սնուցում ազոտական պարարտանյութով	կգ	120	150	18000
Ազոտական պարարտանյութի տեղափոխում	տոննա	10000	0,15	1500
Պարարտանյութի ցրում	հա	5000	1	5000
Սորտային քաղհան	հա	40000	1	20000
Բերքահավաք	հա	30000	1	30000
Բերքի տեղափոխում	կգ	5.0	2000	10000
Սերմերի զտում, տրամա-չափում, ախտահանում, պարկավորում	տոննա	25000	1.6	40000
Հողի հարկ	հա	23000	1	23000
Չնախատեսված ծախսեր	-	-	-	15000
Ընդամենը ծախսեր	-	-	-	**539000**
Մաքուր սերմնանյութի ելք կգ	կգ	-	-	**1600**
Խառնուրդի ելքից ստացվող հասույթ	կգ	150	400	60000
Սերմնանյութի ինքնարժեքը	կգ	-	-	**299.3**

Աղյուսակ 8

Ոսպի էլիտային սերմնանյութով կատարված ցանքերում կատարվող աշխատանքները և 1կգ առաջին վերարտադրության սերմնանյութի ինքնարժեքը (1 հա-ի հաշվով)

Աշխատանք	Չափի միավորը	Միավորի արժեք, դրամ	Ընդհանուր քանակը	Ընդհանուր արժեքը, դրամ
Սերմնանյութ	կգ	1250	120	150000
Հիմնական պարարտացում՝ ֆոսֆորական	կգ	140	250	35000
կալիումական	կգ	140	150	21000
Պարարտանյութերի և սերմի տեղափոխում	տոննա	10000	0,52	5200
Վար, հողի նախացանքային մշակում, մարգերի պատրաստում	հա	54000	1	54000
Ցանք	հա	12000	1	12000
Պայքար մոլախոտերի դեմ (հերբիցիդ)	կգ	5000	1.5	7500
Պայքար մոլախոտերի դեմ՝ ծլումից 5-6 օր առաջ	հա	10000	1	10000
Սնուցում ազոտական պարարտանյութով	կգ	120	150	18000
Ազոտական պարարտանյութի տեղափոխում	տոննա	10000	0.2	2000
Պարարտանյութի ցրում	հա	5000	1	5000
Սորտային քաղհան	հա	40000	1	40000
Բերքահավաք	հա	30000	1	30000
Բերքի տեղափոխում	կգ	5.0	2000	10000
Սերմերի զտում, փորձաքննություն, ախտահանում, պիտակավորում, պարկավորում	տոննա	25000	1.6	40000
Հողի հարկ	հա	23000	1	23000
Չնախատեսված ծախսեր	-	-	-	20000
Ընդամենը ծախսեր	-	-	-	**482500**
Մաքուր սերմնանյութի ելք կգ	կգ	-	-	**1600**
Խառնուրդի ելքից ստացվող հասույթ	կգ	180	400	72000
Սերմնանյութի ինքնարժեքը	կգ	-	-	**256.5**

Աղյուսակ 9

Սիսեռի էլիտային սերմնանյութով կատարված ցանքերում կատարվող աշխատանքները և 1կգ առաջին վերարտադրության սերմնանյութի ինքնարժեքը (1 հա-ի հաշվով)

Աշխատանք	Չափի միավորը	Միավորի արժեք, դրամ	Ընդհանուր քանակը	Ընդհանուր արժեքը, դրամ
Սերմնանյութ	կգ	1200	100	120000
Հիմնական պարարտացում՝ ֆոսֆորական	կգ	140	250	35000
կալիումական	կգ	140	150	21000
Պարարտանյութերի և սերմի տեղափոխում	տոննա	10000	0,45	4500
Վար, հողի նախացանքային մշակում, մարգերի պատրաստում	հա	54000	1	54000
Ցանք	հա	12000	1	12000
Պայքար մոլախոտերի դեմ (հերբիցիդ)	կգ	5000	1.5	7500
Պայքար մոլախոտերի դեմ՝ ծլումից 5-6 օր առաջ	հա	10000	1	10000
Ոռոգում 3 անգամ	հա	15000	3	45000
Ջրվորի աշխատավարձ 3 անգամ	հա	10000	3	30000
Սնուցում ազոտական պարարտանյութով	կգ	120	150	18000
Ազոտական պարարտանյութի տեղափոխում	տոննա	10000	0.2	2000
Պարարտանյութի ցրում	հա	5000	1	5000
Սորտային քաղհան	հա	20000	1	20000
Բերքահավաք	հա	30000	1	30000
Բերքի տեղափոխում	կգ	5.5	1800	10000
Սերմերի զտում, տրամա-չափում, փորձաքննություն, ախտահանում, պարկավորում	տոննա	30000	1.44	43200
Հողի հարկ	հա	23000	1	23000
Չնախատեսված ծախսեր	-	-	-	15000
Ընդամենը ծախսեր	-	-	-	**505200**
Մաքուր սերմնանյութի ելք կգ	կգ	-	-	**1440**
Խառնուրդի ելքից ստացվող հասույթ	կգ	180	360	64800
Սերմնանյութի ինքնարժեքը	կգ	-	-	**305.8**